

Փորձնակ ոչ կոմերցիոն գնումների բաժնում

Աշխատանքի նկարագրություն

Մենք «Ալֆա-Ֆարմ» Ընկերությունը հրավիրում ազնիվ, պատասխանատվության բարձր զգացումով փորձնակի, ով մասնակցելու է Ընկերության ստորաբաժանումներին անհրաժեշտ ոչ կոմերցիոն ապրանքների և ծառայությունների գնման գործընթացին:

Աշխատանքային պարտականություններ

- Գործող գործընկերներից և շուկայում առկա այլ կազմակերպություններից գնային հարցումների իրականացում,
- Ընկերության մատակարարների հետ անընդհատ կապի պահպանում, մատակարարների ցանկի, նրանց կոնտակտային տվյալների թարմացում, հանդիպումների կազմակերպում,
- Կայքերում հայտարարությունների տեղադրման, էլ նամակագրության և փաստաթղթաշրջանառության վարման հարցերում օժանդակություն;
- Ներքին շուկայի ուսումնասիրություն, լավագույն գնային առաջարկների դուրսբերում
- Անհրաժեշտության դեպքում ապրանքների տեղափոխում մատակարարներից ընկերության գլխավոր գրասենյակ և հակառակը
- Օժանդակություն ընկերությանը ենթակա հիմնական միջոցների գույքագրման հարցում

Պահանջվող հմտություններ

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, ֆինանսների կամ այլ հարակից ոլորտում,
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն,
- Վարորդական B կարգի վկայական,
- Բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ,
- MS Office փաթեթի իմացություն,
- Վերլուծական մտածողություն,
- Արագ կողմնորոշվելու ունակություն,
- Կազմակերպչական հմտություններ՝ ժամանակի պլանավորման և վերջնաժամկետների պահպանման:

Դիմելու ընթացակարգ

Հետաքրքրված թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hr@alfapharm.am էլ. հասցեին՝ նամակի թեմայի դաշտում նշելով «Փորձնակ որ կոմերցիոն գնումների բաժնում»:

Ուղարկված բոլոր ինքնակենսագրականների գաղտնիությունը երաշխավորվում է: